ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №_____

ք.Աբովյան « ____» « ____» 2020թ

« ԱՐՄՔՈՄ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Արմեն Անդրեասյանի, որը գործում է համաձայն կանոնադրության, այսուհետ՝ Օպերատոր, մի կողմից և _____ ՀՀ անձնագիր_____տրված_____-ին____-ի կողմից հասցե_____ այսուհետ՝ Բաժանորդ (այսուհետ առանձին հիշատակման ժամանակ՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ՝Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Օպերատորը պարտավորվում է սույն պայմանագրում սահմանված կարգով Բաժանորդին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունը, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

1.2. Սույն պայմանագրի իմաստով Ծառայություն է համարվում

1.2.1.Օպտիկա-մանրաթելային մալուխի միջոցով Օպերատորին պատկանող ռոուտերի (GPON ONT ROUTER) միացումը համացանցին:

1.2.2.Ծառայությունը մատուցվում է սույն պայմանմագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում նկարագրված սարքավորման միջոցով, ինչը հանդիսանում է Օպերատորի սեփականությունը: Այն Բաժանորդին է տրամադրվում հանձնման – ընդունման ակտով:

1.2.3.Ինտերնետ կապը և Հարակից այլ ծառայությունները տրամադրվում են ստորև թվարկված, Բաժանորդի կողմից ընտրած վերբեռնման և ներբեռնման արագություններով.

	Անվանումը	ամսավճար	ներբեռնման և վերբեռնման արագությունները	ստորագրություն
1	ՍԻՆԳԼ	6.000դրամ	մինչև30մբ/30մբ	
2	ՍԴԱՆԴԱՐՏ	7.000դրամ	մինչև 30 մբ/30մբ + (թվային TV մինչև 110 ալիք)	
4	ՀՈՄ	8.500դրամ	մինչև 60 մբ/60մբ+(110 ալիք IPTV)	
5	ԿՈՄԲՈ	10.000դրամ	մինչև 40 մբ/0մբ + (110 ալիք IPTV)	
6	ՄԱՔՍԻ	12. 000դրամ	մինչև 50 մբ/50մբ +(130 ալիք IPTV)	
7	ՊՐԵՄԻՈՒՄ	10000 դրամ	մինչև 70 մբ/70մբ +(150 ալիք IPTV)	
8	REAL IP	1000դրամ		

1.3 Ծառայութունը մատուցվում է_____ հասցեում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Օպերատորը պարտավոր է՝

2.1.1.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2.Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 3 օրվա ընթացքում վերացնել մատուցված Ծառայության արդյուքում ի հայտ եկած թերություններն ու անսարքությունները: Բաժանորդի կողմից դիմումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում միացնել ինտերնետ կապը հակառակ դեպքում Բաժանորդին Օպերատորի հաշվին տրամադրել ինտերնետ կապ՝յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:

2.2.Բաժանորդը պարտավոր է՝

2.2.1.Վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գինը նույն կետում սահմանված պայմաններով և ժամկետներում:

2.2.2.Մնալ պայմանագրով սահմանված սակագնային պլանի բաժանորդ 12 (տասներկու) ամիսների ընթացքում: Բաժանորդը համարվում է նշված պարտավորությունը պատշաճ կատարած, եթե անընդմեջ 12 (տասներկու) ամիսների ընթացքում մնացել է բաժանորդային պայմանագրով սահմանված Օպերատորի ինտերնետ ծառայության և սակագնային պլանի բաժանորդ և ամբողջությամբ վճարել է 12 (տասներկու) ամիսների ամսավճարները՝սույն պայմանագրի 1.2.3 կետի համապատասխան ենթակետի համաձայն սահմանված կարգով.

2.2.3. 12 (տասներկու) ամսյա ժամկետում Օպերատորի ծառայությունից հրաժարվելու դեպքում Օպերատորին վճարել տուժանք՝20 000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով (Օպերատորի ծառայությունից հրաժարվել է համարվում նաև երկու ամիս անընդմեջ մատուցվող ծառայություններից չօգտվելը):

2.2.4.Սույն պայմանագրի 2.2.2 կետում նշված պայմանները գործում են նաև այն դեպքում, երբ բաժանորդը ցանկանում է փոփոխել 1.2.3 կետում նշված սակագնային պլանը՝ առավել ցածր կամ բարձր պայմաններով:

2.2.5.Որևէ կերպ չտրամադրել /չփոխանցել/ Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները՝ երրորդ անձի: Սույն կետի խախտման դեպքում Բաժանորդը պարտավոր է Օպերատորին վճարել պայմանագրի գործողության ժամկետի չվճարված մասի ողջ գումարը որպես տույժ:

2.2.6. 12 (տասներկու) ամսյա ժամկետում Օպերատորի ծառայությունից հրաժարվելու դեպքում Օպերատորին վճարել Պայմանագրին կից կազմված Հավելված 1-ով հանձնված սարքավորումների արժեքը ամբողջությամբ:

2.2.7.Սարքավորման համար ապահովել էլեկտրական հոսանք՝Սարքավորման վրա նշված էլեկտրական լարման տիրույթում.

2.2.8. Տրամադրված սարքավորումների տուփերը Օպերատորին չվերադարձնելու դեպքում վճարել տույժ՝ յուրաքանչյուր տուփի համար 3,000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով.

2.3.Օպերատորը իրավունք ունի՝

2.3.1.Կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից: Հավելյալ Ծառայությունների համար Բաժանորդից պահանջել առանձին վճար:

2.3.2. Պայմանագրի գործողության ընթացքում Բաժանորդի կողմից ոչ պակաս քան երկու ամիս Օպերատորի ծառայություններից չօգտվելը համարվում է Բաժանորդի կողմից պայմանագրից միակողմանի հրաժարում: Վերոնշյալ ժամկետում սույն Պայմանագրին կից կազմված Հավելված 1-ով հանձնված սարքավորումները չհանձելու և Պայմանագրի 2.2.3.կետով սահմանված տուժանքը չվճարելու դեպքում Օպերատորը իրավունք ունի դիմելու դատարան,որի դեպքում Բաժանորդը կկրի նաև դատական ծախսերը հատուցելու պարտականությունը:

2.3.3.Բաժանորդի տարածքում ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից սահմանված նորմերը և եթե դա նախօրոք համաձայնեցվել է Բաժանորդի հետ:

2.3.4.Բաժանորդի կողմից Պայմանագրի 2.2.5 կետի խախտման դեպքում դադարեցնել ծառայությունների տրամադրումը և միակողմանիորեն վաղաժամ խզել պայմանագիրը:2.4.Բաժանորդը իրավունք ունի՝

2.4.1. 15 (տասնհինգ) օրվա ընթացքում հրաժարվել բաժանորդային Պայմանագրից և հետ ստանալ վճարված ամսավճարը պայմանով, եթե վերադարձնում է դրամարկղային կտրոնը և Բաժանորդի օգտագործած տրաֆիկը չի գերազանցում 100 ՄԲ-ը: Օգտագործած տրաֆիկը 100ՄԲ – ից ավել լինելու դեպքում ամսավճարը ենթակա չէ վերադարձման:

2.4.2.Ստանալ իրեն մատուցված Ծառայությունների վերծանումները, ինչի համար Օպերատորը կարող է գանձել առանձին վճար:

2.4.3.Անվճար կարգով Բաժանորդը կարող է ժամանակավոր դադարեցնել/կասեցնել/ իրեն մատուցվող Ծառայությունները նվազագույնը 10/տաս/ օրյա, իսկ առավելագույնը՝ երկու ամսյա ժամկետով՝ Օպերատորիններ կայացնելով համապատասխան դիմումը և վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց: Ծառայությունների ժամանակավոր դադարեցման /կասեցման/ համար Բաժանորդը իրավունք ունի դիմել հաշվարկային տարում 2 /երկու/ անգամ:

2.4.4.Բաժանորդի կողմից դիմումում նշված՝ Ծառայությունների մատուցումը ժամանակավոր դադարեցնելու/կասեցնելու/ ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են, և Օպերատորը պարտավոր չէ Բաժանորդին այդ մասին լրացուցիչ ծանուցելու կամ հիշեցնելու:

2.4.5.Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավոր դադարեցնել/կասեցնել/ իրեն մատուցվող Ծառայություններն ավելի քան երկու ամիս ժամկետով, ապա նա համապատասխան դիմում է ներկայացնում Օպերատորին և վճարում է Օպերատորի կողմից 2.2.3 կետով սահմանված վճարը:

2.4.6.Ծառայությունների մատուցման կասեցման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում վերաակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել Օպերատորի նկատմամբ ունեցած վճարային պարտքը, տույժերը, եթե այդպիսիք հաշվարկվել են, վերաակտիվացման համար գանձվող վճարը և Օպերատորի կողմից կատարած աշխատանքների դիմաց վճարները և այլ փաստացիկատարված ծախսերը՝ Բաժանորդի կողմից վճարվելու դեպքում միայն:

2.4.7.Բաժանորդն իրավունք ունի ավելացնել Ծառայության արագությունը: Ծառայության արագության ավելացումը կատարվում է դրա համար վճարմանը հաջորդող աշխատանքային օրը՝ պայմանագրի անբաժան մաս հանդիսացող հավելված 2-ը կնքելուց հետո:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1.Սույն Պայմանագրի ամսավճարը՝ հաշվի առնելով սույն պայմանագրի.2.3 կետում նշված սակագինը՝ կազմում է _____ (_____) դրամ:

3.2.Պայմանագրով սահմանված ամսավճարը վճարվում է Օպերատորի գրասենյակում կամ վճարային համակարգերիի միջոցով (Տերմինալ):

3.3. Վճարվող ամսվա համար վճարումը պետք է կատարվի մինչև նախորդ ամսվա վերջին օրը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Սխալի կամ անսարքության մասին Բաժանորդը պարտավոր է անհապաղ հայտնել Օպերատորին: Ուշացման դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում հայտնելու նախորդող ժամանակահատվածի համար:

4.2.Բաժանորդը՝ պայմանագիրը կազմելուց հետո, եթե խզում է պայմանագիրը՝մինչև ծառայության միացումը և ակտիվացումը, պարտավոր է վճարել 2000 դրամ տուժանք:

4.3.Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման հետ կապված միայն այն սխալների և անսարքությունների համար, որոնք գտնվում են իր պատասխանատվության և վերահսկողության ներքո: Օրինակ՝եթե սխալների և/կամ անսարքության պատճառը Սարքավորումից հետո է կամ էլեկտրաէներգիայի բացակայությունը, տատանումը և այլիրադարձություն, որը դուրս է Օպերատորի վերահսկողությունից, Օպերատորը պատասխանատվություն չիկրում:

4.4. Օպտիկական մալուխի վնասման դեպքում, եթե վնասումը տեղի է ունեցել բաժանորդի տարածքում և կա օպտիկական մալուխի վերամոնտաժման անհրաժեշտություն, ապա բաժանորդը պարտավորվում է օպերատորին վճարել տուժանք 6000 ՀՀ դրամի չափով:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը կլուծվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

6.2.Օպերատորը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել Ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը և Սակագները այդ մասին 30 օր առաջ նախօրոք տեղեկացնելով Բաժանորդին: Նոր սակագնի հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը 25 օրվա ընթացքում տեղեկացնելով կարող է հրաժարվել պայմանագրից: Հակառակ դեպքում Պայմանագիրը շարունակում է գործել կողմերի միջև նոր պայմաններով և նոր Սակագնի հիման վրա:

6.3. Պայմանագիրը կնքվում է 1 /մեկ/ տարի ժամկետով: Պայմանագիրը համարվում է երկարաձգված յուրաքանչյուր անգամ նույնքան ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց 30 օր առաջ գրավոր ծանուցմամբ չի հրաժարվում դրանից:

ՕՊԵՐԱՏՈՐ	ԲԱԺԱՆՈՐԴ
<<ԱՐՄՔՈՄ>> ՍՊԸ	Ա.Ա.Հ._____
ք.Աբովյան, Է.Ավագյանի. 1/40տուն	Հասցե_____
ՀՎՀՀ03544362	Անձնագիր_____
Հ/Հ20511220967610 01	Հեռ._____Բջջ._____
<<Ինեկոբանկ>>ՓԲԸ	
Հեռախոս	
տնօրեն՝ ԱրմենԱնդրեասյան	
_____ (ստորագրություն)	_____(ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կողմերի միջև ,___, _____ 2020թ. Կնքված ինտերնետ հասանելիության և հարակից այլ ծառայությունների մատուցման պայմանագիր №_____

Հանձնման ընդունման ակտ.

Սարքավորումներ. Աղյուսակ 1

Հ/Հ	Սարքավոր-ման անվանումը	Չափման միավոր	Քանակ	Հերթականհամար (serial number) եթե կա	Միանվագ վճարման ենթակա գումարի չափը	Արժեք
1.	GPON ONU	հատ	1		50000	դրամ
2.						
3.						
4.						
5.						

Սարքավորում(ներ)ը տրամադրվում են առանց վճարի գանձման (բացառությամբ հավելյալ ծառայությունների համար տրամադրվող սարքավորումների)՝ մինչև բաժանորդագրության ավարտն՝ օգտագործման իրավունքով:

Եթե Բաժանորդին Աղյուսակ 1-ով տրամադրված սարքավորում(ներ)ը վնասվել կամ կորել է, ապա Բաժանորդը պարտավոր է Օպերատորին վճարել դրա արժեքը ամբողջությամբ:

Բաժանորդը՝ պայմանագրից հրաժարվելու դեպքում, պարտավոր է ամբողջությամբ Օպերատորին վճարել հանձնված սարքավորումների արժեքը:

ՕՊԵՐԱՏՈՐ	ԲԱԺԱՆՈՐԴ
<<ԱՐՄՔՈՄ>> ՍՊԸ	Ա.Ա.Հ._____
ք.Աբովյան, Է.Ավագյան փ. 1/40 տուն	Հասցե_____
ՀՎՀՀ03544362	Անձնագիր_____
Հ/Հ20511220967610 01 <<Ինեկոբանկ>>ՓԲԸ	Հեռ._____Բջջ._____
Հեռախոս	
տնօրեն՝ Արմեն Անդրեասյան	
_____ (ստորագրություն)	_____(ստորագրություն)